Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵԾ-3 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 15.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:11:09 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 105 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 2 դեպքի վարում՝ «Ընտանեկան նպաստ» համակարգում վերահաշվառման կազմակերպում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 14 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 14 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 25 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 33 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին՝
    - ✓ Կինեզոլոգիա,
    - ✓ Հմուտ ձեռքեր,
    - ✓ Երգ,
    - ✓ Հիշողության մարզում,
    - ✓ Տիկնիկագործություն,
    - ✓ Ձեռքի աշխատանք,
    - ✓ Քննարկումների ակումբ,
    - ✓ Առողջապահական:
  - Ճաշարանի 51 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - «Եղիցի լույս»՝ նվիրված Պ.Սևակի 100-ամյակին,
    - Ցուցահանդես-միջոցառում՝ «Հմուտ ձեռքեր» խմբակի անդամների նախաձեռնությամբ,
    - Տեառնընդառաջ,
    - Կանանց միջազգային օր,
    - Ներկայացման դիտում՝ «Երբ գարուն է գալիս»,

- Ներկայացման դիտում՝ Գ.Սունդուկյանի անվան թատրոն, «Հարսնացուն հյուսիսից»,
- Ներկայացման դիտում, Հ.Ղափլանյանի անվան թատրոն, «Գանգսթեր Մաքը»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Գուստավ Մալեր սիմֆոնիա թիվ 1 ռե մաժոր «Տիտան»,
- Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ջ.Վերդի «Տրավիատա»,
- Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, «Թ. Ալթունյան» պետական անսամբլի 86-րդ համերգաշրջանի բացում, Թ.Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական անսամբլի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի բացումը,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, միջոցառում նվիրված ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, համերգ նվիրված «Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի փակումը,

  - 14 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ✓ «Եղիցի լույս» նվիրված Պ.Սեվակի 100-ամյակին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1113084286727379),
- ✓ Միջոցառում նվիրված Տեառնընդառաջի տոնին, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1457043001888933),
- ✓ Կանանց միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo?fbid=823550319808805&set=pcb.823550496475454),
- ✓ Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1457043001888933),
- ✓ Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1836069733492811),
- ✓ Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1513590936041337):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 105/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 61 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 59 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 27 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 11 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 26 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 41 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում<br>Բաղնիքի ծառայությունից | 51<br>14 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)